ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՄԵՋ

ԳԵՐԱՇՆՈՐՀ ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿՐԸՆՈՊԼ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ՝

1945 թ. Ազգային-Եկեղեցական ժողովի օրերին. Վեհափառ Հայրապետը և Արտավազդ Արքեպիսկոպոսը վանքի պարտեզում

Գաղութս անհամբեր կը սպասեր Եվրոպայի Առաջնորդ և Կաթողիկոսական Պատվիրակ Գեր. Արտավազդ Արքեպիսկոպոսի այցելության։

Շաբաթ օր, փետրվարի 22-ի առավոտուն, բաղաքս ժամանեց Սրբազան հյուրը. վինք դիմավորելու կայարան եկած էր ազգային մարմինները ներկայացնող պատվիրակություն մը։

Քաղաքիս լավագույն պանդոկներեն մեկուն մեջ պատվիրակության անդամներուն հետ թեյ առնելե, յուրաքանչյուրին հետ ծանոթանալե ու հայրական օրհնությունները տալե վերջ, իրեն սենյակը առանձնացավ ամբողջ գիշերվան մը ճամբորդության խոնջքեն կազդուրվելու համար։

Միևնույն օրը կեսօրվեն սկսյալ մինչև հառաջիկա ուրբաթ հայկական ավանդական հյուրասիրությամբ պատվասիրվեցավ, գուրգուրանքի ու հարգանքի առարկա դառնալով։

Կիրակի առավոտ ժողովուրդը խուռներամ փութացած էր ժամերգության համար, մաս-

Գաղութս անհամբեր կը սպասեր Եվրոպայի Առաջնորդ և Կաթողիկոսական Պատվիրակ Գեր. Արտավազդ Արքեպիսկոպոսի այցելության։

Շաբաթ օր, փետրվարի 22-ի առավոտուն, բաղաքս ժամանեց Սրբազան հյուրը. վինք դիմավորելու կայարան եկած էր ազգային մարմինները ներկայացնող պատվիրակություն մը։

Քաղաքիս լավագույն պանդոկներեն մեկուն մեջ պատվիրակության անդամներուն հետ թեյ առնելե, յուրաքանչյուրին հետ ծանոթանալե ու հայրական օրհնությունները տալե վերջ, իրեն սենյակը առանձնացավ ամբողջ գիշերվան մը ճամբորդության խոնջքեն կազդուրվելու համար։

Միևնույն օրը կեսօրվեն սկսյալ մինչև հառաջիկա ուրբաթ հայկական ավանդական հյուրասիրությամբ պատվասիրվեցավ, գուրգուրանքի ու հարգանքի առարկա դառնալով։

Կիրակի առավոտ ժողովուրդը խուռներամ փութացած էր ժամերգության համար, մաս-

նավորաբար վարձված քաղաքիս մեծագույն սրահներեն մին. պատարագիչն էր Տեր Սահակ քհն. Պապիկյան՝ Վալանսեն։

Խոր լռության մեջ Սրբազանը տվավ իր պատգամը՝ նյութ ունենալով «Սրբություն»-ը, —«Սուրբ եղեցի անուն քո»։ Շեշտեց կյանքի մեջ սրբության անհրաժեշտությունն ու օգուտները։

Հորդորեց, որ կանայք համեստ ըլլան իրենց վարմունքին ու պարզ իրենց արդուզարդին մեջ, զգուշանալով աչքի զարնող ադամանդյա ու ոսկեղեն պերճանքե։ Այրեր դդուշանան տան և խանութի ավելորդ արտաքին ցուցադրութենե։

Հանձնարարեց, որ ծնողք հոգ տանին իրենց զավակներու հայացի դաստիարակության, հայ լեզվի, հայ անուններու, որոնք օտար անուններե ավելի անուշ են մեզի համար։ Ուրախություն հայտնելե հետո որ Ֆրանսայի հայությունը ամեն տեղ գեղեցիկ եկեղեցիներ ու մատուռներ շինած է, հարց.— «Համերաշխության, իրերօգնության ու եղբայրասիրության ետևե եղեք»։

Կեսօրե հետո միևնույն բազմությունը միևնույն սրահին մեջ հավաքվեցավ իր կարդին տոնելու Վեհափառ Ս. Հայրապետի ընտրության և օծման հանդիսությունները։

Հանդեսը բացվեցավ ֆրանսիական քայլերգով ու «Ծաղկիր ազատ իմ հայրենիք» երգով. եղան օրվան հարմար խմբերգեր, արտասանություններ, մենակներ։ Հետո Սրբազանը կրկին բեմ բարձրանալով ոգեկոչեց ու պանծացուց մեր պատմության ընթացքին Հայաստանյայց եկեղեցվո շինիչ դերը, ըսելով, որ Հայաստանյայց եկեղեցին տվավ մեզի մեր դրերը, Աստուածաշնչի հոյակապ թարգմանությունը, մեր քաղցրալուր երգեցողությունը, ճարտարապետությունը, նկարչությունը. գովեց մշակույթը, որով ինքզինքնիս այնքան հարստացուցանք քաղաքակիրթ աշխարհի առջև։ Հայաստանյայց եկեղեցին կերտեց մեր մեջ հայ քրիստոնյա հոգին, որուն շնորհիվ մեր ազգը անմահացավ, ու թեև դարերու ընթացքին բարբարոս ցեղեր մեզ փշացնել փորձեցին, բայց իրենք անհետացան, մինչ յուրաքանչյուր հարվածե ետք փյունիկ թռչունի նման հայը աճյուններեն դուրս խոյացավ ավելի գեղեցկացած ու ավելի երիտասարդ։

Ապա Սրբազանը մտովի փոխադրեց մեզ Հայաստան, անկե վաղարշապատ՝ Ս. Էջմիածնա Մայր Տաճարը, ուր մենք ալ կարծես ներկա գտնվեցանք Հայրապետական ընտրության և օծման փառավոր հանդիսությանց։ Դիտել տվավ, որ Վեհափառ Գևորգ Ջ Ս. Կաթողիկոսի և համայն հայ եկեղեցվո ցույց տված հայրենասիրությունն և աջակցությունը գնահատելով Մեծն Ստալին և Խորհրդային Կառավարությունը Հայաստանյայց Եկեղեցին իր նախկին հեղինակության ու փառքին մեջ վերահաստատեցին. ասոր համար կօրհնենք զԱստուած և Խորհրդային Կառավարությունը։

Սրբազանը անգամ մըն ալ աղոթեց ու օրհնեց Կրընոպլի իր սիրելի ժողովուրդը ու երբ հանդեսը վերջացավ, ներկաներ Սրբազանը շրջապատելով Ս. Աջը համբուրեցին և ակամա բաժնվեցան սրահեն։

Երեկոյան Սրբազանի ի պատիվ տրվեցավ ճաշկերույթ մը ուրախ ու հաճելի մթնոլորտի մը մեջ, ուր հայրենակիցներ խոսք առնելով մաղթանքներ ըրին Սպարապետ Ստալինի, Վեհափառ Ս. Հայրապետի, Խորհրդային Միության ու Խորհրդային Հայաստանի Կառավարությանց ու Սրբազանի արեշատության համար։ Հայրենասիրությամբ էլեկտրականացած մթնոլորտի մը մեջ Սրբազանը խոսք առնելով փառաբանեց հայ ժողովրդի շինարար և ստեղծագործ ոգին և Ս. Ս. Հայաստանի կառավարության ժողովուրդին ցույց տված հոգածությունը, գովեց մյուս եղբայր հանրապետությանց և մանավանդ քաջ ու աշխիկ Ռուս ժողովրդի Հայաստանի ընծայած աջակցությունն ու պաշտպանությունը, որուն շնորհիվ կարելի եղավ Հայաստանի կատարած վերելքը և այսօրվան ազդահավաքումը։ Սրբազանը իր կենդանի նկարագրություններով պատկերացուց մեզի մայրաքաղաքի կարևոր հաստատությունները, Պետական Պալատը, Համալսարանը, Օպերան, Թատրոնը, Գրադարանը, Հիմանդանոցը, ուր զինք մահվան ճիրաններեն խլած էին. նկարագրեց այնքան կարճ ժամանակվա ընթացքին ամեն մարզի մեջ կատարված անանխընթաց վերելքը, կարդաց Վեհափառ Հայրապետի կոնդակը, որուն մեջ կոչ կըներ Սիսյուրքի իր զավակներուն՝ ըսելով. «Ձեր Հայաստանի եղբայրները ձեզի համար հայրենիք մը կերտեցին և անոր պաշտպանության համար ալ իրենց արյունը թափեցին, վստահ եմ թե դուք ալ անոր վերելքին ձեր զոհողության բաժինը պիտի բերեք»։

Հայրապետին կոչը բոլորիս ի խորոց սըր-

տի հուզեց, և ներկաները կարգավ իրենց նվերները խոստացան, իրենց բաժինը բերելով հայրենաշինության և ազգահավաքումի սուրբ գործին։ Գոյացված գումարը շատ քաջալերական էր։ Սրբազանի օրհնութիւնեն վերջ սեղանակիցներ ուրախությամբ մեկնեցան իրենց սրտերուն մեջ ազնիվ գործ մը կատարած ըլլալու գոհունակությամբն ու հպարտությամբը։

Վեհափառ Ս. Հայրապետին մեր երախտագիտությունը կհայտնենք, Գերաշնորհ Արտավազդ Արքեպիսկոպոսը Եվրոպա ուղարկած ըլլալուն համար և խորին շնորհակալություններ Հայրապետական Նվիրակին անխոնջ ջանքերուն համար, որով ժողովուրդի սրտին մեջեն կորսվելու վրա եղող բարեպաշտության և բարձր հայրենասիրության ոգին հրահրեց. այնպես որ փետրվար 23-ի կիրակին հոգեկան ներշնչումի և Աստուածային օրհնությանց նոր Հոգեգալուստի օր մը եղավ։

Կօրհնենք զԱստուած իր ծառան մեր մեջը ղրկելուն համար, իսկ Գերաշնորհ Արտավազդ Արքեպիսկոպոսին ալ լիակատար հաջողություն կմաղթենք իր Քրիստոսանվեր և ազգանվեր առաքելության մեջ։

ՏԻԳՐԱՆ ՄԵՍՐՈՊՅԱՆ

(«Հայաստանի կոչնակ», թիվ 15)

5 մարտ 1947 թ.
Կրքնոպլ

ԿԻԼԻԿԻՈ ԹԵՄԸ ՀԻՆԳ ՆՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ ՈՒՆԵՑԱՎ

«Ժողովուրդի ձայն»-ը հաղորդում է.—

Փետրվարի 17-ին, մեծ բազմության մը ներկայության, Անթիլիասի Մայր Տաճարին մեջ, Վեհափառ Գարեգին Կաթողիկոսի ձեռամբ տեղի ունեցավ հինգ նոր եպիսկոպոսներու օծումն ու ձեռնադրությունը։ Ձեռնադրվողներն են Գեր. Գեր. Դերենիկ, Փառեն, Զարեհ, Խորեն և Ղևոնդ ծայրագույն վարդապետները։ Արարողությունները տեղի ունեցան Հայ Եկեղեցվո հատուկ ավանդական շուքով։

Ձեռնադրութենեն հետո, եկեղեցվո բեմեն և հետո վեհարանին մեջ, Վեհափառը շնորհավորեց նորընծա եպիսկոպոսները և հիշեցուց եկեղեցիին, ազգին ու հայրենիքին հանդեպ ունեցած պարտականությունները։

Ամբողջ արարողությանց, ինչպես և անկե հետո տեղի ունեցող հանդիսավոր ճաշկերույթին ներկա էին բազմաթիվ հյուրեր։